ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



# ԵՐԿԱՄՅԱ ԶԵԿՈՒՅՑ

2019 Թ. - 2021 Թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքը ........ 1

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի խոսքը ........ 2

Ռազմավարական նշանակության ոլորտներ ........ 3

Ծրագրեր և աջակցություն ........ 5

- «իԳործ». սփյուռքի մասնագետները կառավարությունում ........ 5
- Հայրենադարձության և ինտեգրման կենտրոն ........ 7
- Ընթացիկ օգնություն ներկա և ապագա հայրենադարձներին ........ 8
- Աջակցություն սփյուռքի ներդրողներին և բարեգործներին ........ 10
- Երիտասարդական ծրագրեր ........ 11
- Սփյուռքը և տեխնոլոգիական ծրագրերը ........ 14
- Սփյուռքի ներուժի քարտեզագրում ........ 16

Կապ և համագործակցություն ........ 17

Քովիդ-19 ........ 20

Լիբանան ........ 24

Արցախյան երկրորդ պատերազմ և հետպատերազմյան ժամանակաշրջան ........ 27

Նայելով առաջ ........ 31

# ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ



## Սիրելի՛ աշխարհասփյուռ հայրենակիցներ,

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հիմնադրման 2-ամյակի առթիվ ուրախ եմ ևս մեկ անգամ դիմել ձեզ: Հետհեղափոխական Հայաստանի կառավարության օրակարգում հայկական սփյուռքի հետ աշխատանքը և հարաբերությունների սերտացումը մշտապես եղել են սկզբունքային և կարևոր: Առաջնորդվելով ուժեղ Հայաստան-հզոր սփյուռք բանաձևով՝ մենք սփյուռքի հարատևման և զարգացման հեռանկարը տեսնում ենք միայն ժողովրդավար, կայուն, առաջընթաց Հայաստան պետության գոյության պարագայում: Հայաստանը մեր, ձեր, բոլորիս ինքնության օջախն է, և այդ օջախի շուրջ պիտի կառուցվի ողջ հայ ժողովրդի կյանքը: Այդ օջախի շենությունն ու ուժեղությունը պետք է լինի մեզնից յուրաքանչյուրի օրակարգի հարցը՝ ամրապնդելով մեր երկիրը միասին վերակառուցելու վճռականությունը:

Անկախացումից ի վեր՝ սփյուռքը նշանակալի ներկայություն է ունեցել Հայաստանի զարգացման բոլոր ծրագրերում: Անգնահատելի է նաև սփյուռքի մեր հայրենակիցների համախմբումն ու նվիրումը Հայաստանում կորոնավիրուսային համավարակի թեժ ամիսներին և Արցախյան 2-րդ պատերազմի ողջ ընթացքում: Այդ համասփյուռ աննախադեպ մոբիլիզացիան մեզ իրավամբ ուժ և կորով տվեց:

Այսօր Հայաստանն ու Արցախը բարդ ճանապարհ են անցնում, որի հաղթահարումը մեր համաշխարհային ներուժի միասնականության ու ջանքերի  գերլարման պարագայում կարող է միայն արդյունավետորեն ստացվել: Եվս մեկ անգամ սփյուռքի բոլոր ներկայացուցիչներին ՀՀ կառավարության անունից հայտնում եմ բաց ու անկեղծ համագործակցության մեր պատրաստակամությունը:

Հարգանքով՝

Նիկոլ Փաշինյան

ՀՀ վարչապետ

# ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ



## Սիրելի՛ հայրենակիցներ,

**Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակն արդեն 2 տարեկան է, և չնայած անցած տարվա պատմական դժվար հանգամանքներին՝ մենք հավատարիմ մնացինք Հայաստանում և սփյուռքում ապրող հայերի ապագային և բարգավաճմանը, հայկական ինքնության պահպանմանը և հայ ազգի երկու անբաժանելի մասերի առավելագույն ինտեգրմանը: Իրագործելով մեր առաքելությունը՝ մենք երախտապարտ ենք սփյուռքի մեր գործընկերներին, որոնք անսասան կանգնած են հայրենիքի կողքին մեր պատմության ամենադժվարին փուլի ընթացքում:**

**Այս երկամյա զեկույցն ամփոփում է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի աշխատանքի հիմնական ուղղությունները՝ ստեղծման օրվանից ի վեր: Մեր քաղաքականությունը և ծրագրերը հիմնված են այն անհերքելի իրողության վրա, որ Հայաստանը կարող է ծաղկել միայն սփյուռքի առավելագույն ներգրավվածությամբ, և որ առանց հայկական ուժեղ պետականության՝ սփյուռքի ապագան վտանգված է: Ահա այդ նպատակով՝ մենք ձեռնամուխ ենք եղել կառուցել ամուր կամուրջներ աշխարհասփյուռ հայկական համայնքների հետ, որը նոր համագործակցությունների հնարավորություններ է ընձեռել: Համագործակցության, ակտիվ մասնակցության և սփյուռքի մեր հայրենակիցների նվիրվածության միջոցով մենք կարող ենք հաղթահարել մեզ հանդիպած բարդ մարտահրավերները, մենք կարող ենք կերտել ապագայի Հայաստանը և այս ամենի արդյունքում ուժեղացնել ու հզորացնել սփյուռքը:**

**Հարգանքով՝**

**Զարեհ Սինանյան**

**Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար**

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

ՀՀ վարչապետի կողմից 2019 թվականի հունիսի 11-ին հիմնվեց ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը: Այն պատասխանատու է Հայաստան-սփյուռք հարաբերությունների հզորացման համար, ինչն իրագործվում է ռազմավարության, քաղաքականության և ծրագրերի մշակման միջոցով:

## Գրասենյակի ռազմավարական ուղղությունները 9 են՝

1. խրախուսել սփյուռքում պետականակենտրոն ինքնության ձևավորումը,

2. ամուր կապեր հաստատել սփյուռքի հետ գործընկերության, ծրագրերի և միջոցառումների շնորհիվ,

3. աջակցել սփյուռքում երիտասարդների առաջնորդությանը և համայնքների կազմակերպմանը,

4. համախմբել համահայկական կազմակերպություններին և ներգրավել Հայաստանի զարգացման գործում,

5. ներգրավել սփյուռքի մասնագիտական ներուժը՝ նպաստելու Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացմանն ու հզորացմանը,

6. խթանել հայրենադարձությունը և հայրենադարձների սահուն ինտեգրումը,

7. աջակցել սփյուռքի ներդրողներին և բարեգործներին Հայաստանում իրենց ծրագրերն իրականացնելիս,

8. քարտեզագրել սփյուռքի մասնագիտական ներուժը,

9. սփյուռքին տեղեկացնել Հայաստանում և սփյուռքի համայնքներում իրականացվող միջոցառումների մասին:





Մեր գրասենյակը բաղկացած է տարբեր ոլորտների մասնագետներից, որոնց մի մասը սփյուռքի համայնքներից են: Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը և գրասենյակի ղեկավար Սառա Անջարգոլյանը հայրենադարձներ են:

# ԲՅՈՒՋԵ

Նախկին Սփյուռքի նախարարության ծրագրային բյուջեն, չներառելով աշխատակազմի պահպանման ծախսերը, 2018 թվականին կազմել է 685 միլիոն ՀՀ դրամ: 2020 թվականին մենք ավելացրինք այն՝ դարձնելով 775 մլն ՀՀ դրամ, 2021 թ.՝ 890 միլիոն ՀՀ դրամ:

Այնուամենայնիվ, Հայաստանի պետական բյուջեի վրա կորոնավիրուսային համավարակի և Արցախյան պատերազմի փնտեսական ծանր ազդեցության հետևանքով մեր գրասենյակի բյուջեն 2021-2022 թվականների համար նվազել է 40%-ով:

Նախատեսվում է, որ 2022 թ. այն կկազմի 791 մլն ՀՀ դրամ:

«Երբ 2019 թվականին մեր գրասենյակը հիմնվեց, սակավաթիվ էին կառավարությունում աշխատող սփյուռքահայերը: «իԳործ» ծրագրի մեկնարկից հետո աշխարհի տարբեր կողմերից ժամանած 50-ից ավելի սփյուռքահայ մասնագետներ կան կառավարությունում»:

Զարեհ Սինանյան
ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար




2020 թվականին մեր գրասենյակը հպարտությամբ մեկնարկեց «իԳործ»-ը՝ աննախադեպ ծրագիր, որը հրավիրում է սփյուռքահայ մասնագետներին աշխատելու ՀՀ պետական կառավարման համակարգում: Ըստ պետական հաստատությունների կարիքների՝ ծրագրի շրջանակներում սփյուռքահայ մասնագետները սկսում են աշխատել և հնարավորություն ունենում ներդնել իրենց փորձն ու գիտելիքները կառույցների բարելավման, քաղաքականության և ծրագրերի զարգացման աշխատանքներում:

## «իԳործ». սփյուռքահայ մասնագետները կառավարությունում

Ծրագիրը մեկնարկեց 2020 թվականի մարտին: Ստացվեց գրեթե 800 հայտ 27 երկրից: Նրանցից շուրջ 100-ի հետ անցկացվեց հարցազրույց, և 52 սփյուռքահայ մասնագետներ ժամանեցին Հայաստան՝ աշխատելու 19 պետական տարբեր կառույցներում: Ծրագրի ծախսերն ամբողջությամբ հոգում է ՀՀ կառավարությունը:





### Սահակ Մահրեճեան

Սահակը Կոնկորդիայի համալսարանում սպացել է բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան և առողջապահական մենեջմենթի ոլորտի մասնագիտացում ՄակԳիլի համալսարանում: Նա վարչապետի աշխատակազմում ծառայում է որպես ռազմավարությունների գծով մասնագետ և այժմ աշխատում է տարբեր ոլորտներում երկարաժամկետ ռազմավարությունների մշակման ուղղությամբ: Սահակը ուրախ է այստեղ լինել և հնարավորություն ունենալ աջակցել հայրենիքի զարգացմանն ամենաբարձր օղակում: Ռազմավարական աշխատանքից բացի՝ Սահակը զբաղվում է նաև համակարգի ներսում սիլոսի մտածելակերպի վերացմամբ, որը թույլ կտա պետական մարմիններին առավել արդյունավետ դարձնել իրենց կապը և համագործակցությունը:



### Հայկ Մարգարյան

Հայկն ակադեմիական կրթությամբ տնտեսագետ է և ապրել է ԱՄՆ-ում, Կանադայում ու Ռուսաստանում: Նա մասնագիտացած է ընկերությունների և տնտեսական ծրագրերի կառավարման ոլորտում: Իր կարիերայի ընթացքում նա ակտիվ մասնակցություն է ունեցել բիզնեսի տարաբնույթ ծրագրերում: Կնոջ և երկու երեխաների հետ Հայաստան գալուց և Էկոնոմիկայի նախարարությունում «իԳործ»-ի շրջանակներում 5 ամիս բարեհաջող աշխատելուց հետո նրան առաջարկվեց մշտական աշխատանք որպես նորարարության և ձեռներեցության ազգային կենտրոնի ղեկավար: Հայկը պետք է նորարարությունը կամրջի բիզնեսին: Նա սիրում է աշխատել իր տեղացի և սփյուռքահայ պրոֆեսիոնալ գործընկերների հետ:



### Տաթևիկ Ցյուրքեր

Հայրենադարձվելուց և Շրջակա միջավայրի նախարարությունում աշխատելուց առաջ Տաթևիկը գրեթե տասնամյակ ապրել է արտերկրում: Չնայած հաճախ էր գալիս հայրենիք, միևնույն է, ցանկանում էր մեկ օր ամուսնու հետ ընդմիշտ վերադառնալ Հայաստան (ամուսինը գերմանացի է) և նրան ավելի մոտիկից ծանոթացնել հայկական մշակույթին: «իԳործ»-ը և կառավարությունում աշխատանքը փոխեցին նրա կյանքը. այժմ ավելի մեծ պատասխանատվության զգացում ունի Հայաստանի հանդեպ: Երևանում Տաթևիկն ապրում է ամուսնու և աղջկա հետ, որն արդեն դպրոց է հաճախում և սիրում է հայաստանյան կյանքը:

**Մենք այս տարի երկրորդ անգամ հաջողությամբ մեկնարկեցինք 2021-2022 թթ. «իԳործ»-ը և այժմ հայտաղիմումների դիտարկման և հարցազրույցների նախապատրաստման փուլում ենք: «իԳործ» 2021-2022-ը կմեկնարկի աշնանը:**

**Սեղմեք <u>այստեղ</u> «իԳործ» ծրագրի մասին տեսանյութը դիտելու համար:**

# ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## Հայրենադարձության և ինտեգրման կենտրոն




Հայրենադարձվելու ամենամեծ մարտահրավերներից մեկը, թերևս, բյուրոկրատական և իրավական պահանջների մեջ կողմնորոշվելն է. անձնական գույքի տեղափոխումից մինչև կացության կարգավիճակ, քաղաքացիության ստացման համար դիմում և երեխաներին դպրոցում տեղավորում: Ողջ այս գործընթացը շատ հաճախ թվում է ճնշող և անհարկի բարդացված:

Հայրենադարձության գործընթացը պարզեցնելու և դյուրացնելու համար մեր գրասենյակը Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կբացի Հայրենադարձության և ինտեգրման կենտրոն: Այն տեղակայված կլինի մայրաքաղաք Երևանում, որտեղ հայրենադարձներին կողջունեն ծառայությունների սպասարկման ոլորտում մասնագիտացած աշխատակիցներ և կաջակցեն հայրենադարձման և ինտեգրման բոլոր հարցերում:

Աջակցությունն իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝ փաստաթղթերի լրացում և կառավարական տարբեր մարմինների հետ համագործակցություն, բնակարանի և աշխատանքի որոնում, երեխաներին դպրոցում տեղավորում, առողջապահական հարցերի շուրջ խորհրդատվություն և այլն:

**Մեկ պատուհանի սկզբունքով այս կենտրոնը կդյուրացնի հայրենադարձության գործընթացը և հայրենադարձ ընտանիքների համար կապահովի սահուն ինտեգրում:**

**2018-2020 թթ. ավելի քան 32.000 մեր հայրենակիցներ ստացել են ՀՀ քաղաքացիություն և մոտավորապես 5300-ը՝ ՀՀ-ում մշտական և հատուկ կացություն կարգավիճակ:**



## Ընթացիկ օգնություն ներկա և ապագա հայրենադարձներին

**Հայրենադարձությունը և հայաստանյան կյանքին սփյուռքահայ մեր հայրենակիցների լիարժեք ինտեգրումն առաջնահերթություն են մեզ համար:**

**Մեր գրասենյակն ունի պրոֆեսիոնալ անձնակազմից բաղկացած հայրենադարձության բաժին, որը հայրենադարձներին աջակցում է՝ լուծելու իրենց խնդիրներն ու կարիքները:**




> «Բարև Ձեզ: Բալիկս ձեր շնորհիվ արդեն գնում է մանկապարտեզ: Շատ-շատ շնորհակալ եմ»:
>
> Ֆեյսբուքյան նամակ հայրենադարձի կողմից

Մենք ձգտում ենք լինել այն նավը, որի օգնությամբ սփյուռքի մեր հայրենակիցները կարող են հաղորդակցվել Հայաստանի պետական համակարգի բոլոր օղակների հետ: Այս առումով՝ մեր գրասենյակը հայրենադարձների և հայրենադարձվել պատրաստվողների անխոչընդոտ տեղափոխության հիմնական ռեսուրսն է: Այս ամենից բացի՝ մենք ջանք չենք խնայել ստեղծելու հանրամատչելի կայք, որը պարունակում է եռալեզու տեղեկատվություն հայրենադարձության ամբողջ գործընթացի վերաբերյալ, ներառյալ՝ քաղաքացիության և կացության կարգավիճակի, զինվորական ծառայության, առողջապահության, բիզնեսի, կրթության, աշխատանքի և այլնի մասին: Այս տարի հայրենադարձների համար մեկնարկել ենք նաև օնլայն և օֆլայն իրազեկման շարք, որի ընթացքում անդրադառնում ենք գործընթացի տարբեր քայլերի:






Մասնավորապես՝ օգոստոսի 4-ի պայթյունից հետո Հայաստան ժամանած լիբանանահայ հայրենակիցների համար անցկացրինք տեղեկատվական հատուկ հանդիպում, որին մասնակցեցին ավելի քան 100 հայրենադարձներ:

Ցանկանու՞մ եք հայրենադարձվել: Ծանոթացեք մեր հանրամատչելի ուղեցույցին՝սեղմելով այստեղ:






## ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ՝

- չնայած համաճարակի սահմանափակումներին, պատերազմից և հետպատերազմյան իրավիճակից բխող դժվարություններին՝ շուրջ 1000 հայրենադարձներ ֆիզիկապես այցելել են մեր գրասենյակ և շուրջ 4000-ը՝ կապվել առցանց կամ հեռախոսակապի միջոցով,
- պետության և գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ իրականացված ծրագրերի արդյունքում շուրջ 150 սիրիահայ և լիբանանահայ ուսանողներ ապահովվել են կրթաթոշակով,
- պետության և բարեգործական հիմնադրամների համատեղ ջանքերի արդյունքում հարյուրավոր սիրիահայեր և լիբանանահայեր օգտվել են առողջապահական անվճար ծառայություններից (հետազոտություններ, վիրահատություններ),
- հայրենադարձ ընտանիքների փասնյակ երեխաներ անվճար հիմունքներով գրանցվել և տեղավորվել են մասնավոր մանկապարտեզներում:








## Աջակցություն սփյուռքի ներդրողներին և բարեգործներին

Համաշխարհային հայկական սփյուռքը Հայաստանում ներդրումային և բարեգործական ծրագրեր է իրականացրել դեռևս անկախացումից առաջ: Հայաստանում ներդրումների և բարեգործության ամենափայլուն օրինակներից շատերն իրագործվել են հենց սփյուռքահայերի կողմից:

Վերջին երկու փարում մեր գրասենյակն աջակցել է սփյուռքի բազմաթիվ ներդրողների և բարեգործների՝ սկսելու իրականանցնել և/կամ լուծել այն մարտահրավերները, որոնք հանդիպում են նրանց ծրագրերի զարգացման տարբեր փուլերում:

### Այս ուղղությամբ մեր աշխատանքները հետևյալն են՝

1) սփյուռքին ներկայացնել ներդրումների և բարեգործության նոր հնարավորությունները,
2) սփյուռքի ներդրողների և բարեգործների միջև կապ ստեղծել համատեղ ծրագրերի համար,
3) աջակցել ներդրողներին և բարեգործներին՝ հաղթահարելու բյուրոկրատական խոչընդոտները, մասնավորապես՝ մաքսային/հարկային օրենքների և կարգավորիչ պահանջների համապատասխանեցման հարցը,
4) առաջ տանել ծրագրերն իրավասու կառույցների կողմից,
5) առաջարկել օրենսդրական փոփոխություններ, որոնք խոչընդոտ են հանդիսանում ներդրողների և բարեգործների համար:






## Երիտասարդական ծրագրեր

## «Քայլ դեպի տուն». զարգացնել և պահպանել սփյուռքի երիտասարդության մեջ ազգային ինքնությունը



«Քայլ դեպի տուն»-ը կրթաճանաչողական երկշաբաթյա ճամբարային ծրագիր է 13-18 տարեկան սփյուռքահայ պատանիների համար: Ծրագրի նպատակն է զարգացնել և պահպանել կապը հայրենիքի հետ, ինչպես նաև ձևավորել պետականակենտրոն մտածողությամբ սփյուռքահայ երիտասարդություն:

«Քայլ դեպի տուն»-ը հագեցած օրակարգ ունի՝ հայերենի դասընթացներից մինչև ազգային երգ ու պար, ճամփորդություններ Հայաստանի տարբեր մարզեր և պատմական վայրեր, հանդիպումներ հանրային դեմքերի հետ և այլն:

Ծրագրի ստեղծումից ի վեր՝ ՀՀ կառավարությունը հյուրընկալել է հազարավոր սփյուռքահայ երիտասարդների, ինչը կարևոր է եղել հայրենիքի հետ նրանց հետագա կապի ձևավորման և պահպանման համար:

Ծրագրի 14-օրյա հայաստանյան ժամանակահատվածի բոլոր ծախսերը հոգում է ՀՀ կառավարությունը: Մասնակիցները հոգում են միայն ճանապարհածախսը:

««Քայլ դեպի տուն» ծրագիրն ինձ դարձրեց ավելի հայրենասեր ու բազմակողմանի զարգացած: Ես իմ քայլն արել եմ, հերթը քոնն է»:

*Իզաբելլա Մելքոնյան, Ռ-Դ, 2019*



# ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ



«Ամենակարևորն այն է, որ ծրագրի ընթացքում մենք ուժեղացրինք մեր հայերենը, սովորեցինք շատ ու շատ նոր պատմություններ հայ հերոսների, հայկական փողերի, Հայաստանի և Արցախի պատմության մասին»:

*Վարդան Սամոնյան, Իրաք, 2019*

«Կա՞ արդյոք մի այսպիսի ծրագիր, որտեղ տարբեր երկրներից միևնույն ազգի հարյուրավոր երիտասարդներ հավաքվում են նույն գաղափարի շուրջ, և այդ գաղափարը հայրենիքի հետ ծանոթությունն է: Ինձ համար այդպիսի ծրագիր է «Քայլ դեպի տուն»»:

*Նունե Գևորգյան, Ուկրաինա, 2019*



## ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ՝

**2018-2019 թվականներին անցկացրինք «Քայլ դեպի տուն» ծրագիրը և հյուրընկալեցինք 13-18 տարեկան 900 սփյուռքահայ պատանիների 30 երկրներից: 2020 թվականին քովիդ-19 համավարակի հետևանքով ծրագիրն իրականացվեց առցանց, որին մասնակցեցին 250 սփյուռքահայ երեխաներ 30 երկրներից:**

**Սեղմեք այստեղ «Քայլ դեպի տուն» ծրագրի մասին պատմող տեսանյութը դիտելու համար:**

# Երիտասարդական ծրագրեր

## «Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագիր

Diaspora Youth Ambassador Program

«Սփյուռքի երիտասարդ դեսպան»-ը մեկամյա ծրագիր է՝ նախատեսված 22-35 տարեկան 25 սփյուռքահայ երիտասարդների համար: Ստեղծվելով «Սփյուռքի երիտասարդ առաջնորդների դպրոց» ծրագրի հիմքի վրա՝ այն նպատակ ունի կենսունակ ցանց ստեղծել երիտասարդության, սփյուռքի և հայրենիքի միջև:

Ծրագիրը համայնքային ակտիվիստներին հնարավորություն է ընձեռում գալ Հայաստան և մասնակցել դասախոսությունների, աշխատաժամերի և հանդիպումների, ընդլայնել գիտելիքները հայաստանյան քաղաքական, սոցիալական և տնտեսական հարցերի շուրջ, ինչպես նաև խորացված ուսուցում ստանալ համայնքային ներգրավվածության և ակտիվ մասնակցության վերաբերյալ:

Հայաստան այցից հետո ծրագրի մասնակիցներն իրենց բնակության երկրներում իրականացնելու են միջոցառումներ, ինչպիսիք են՝ տեղի և միջազգային լրատվամիջոցներում Հայաստանի վերաբերյալ մեդիա նյութերի հրապարակումներ, համայնքային հանդիպումներ, հայրենադարձության ընթացակարգի, գրասենյակի ծրագրերի վերաբերյալ իրազեկումներ և այլն:

Ծրագիրը ենթադրում է տեսական և գործնական աշխատանք և ընթանալու է հայերենով: Մասնակիցներին սպասվում են նաև այցեր Հայաստանի պատմամշակութային վայրեր, կրթական և տեխնոլոգիական կենտրոններ, մասնակցության հնարավորություն սոցիալական, կրթական և կամավորական միջոցառումների:

ՀՀ կառավարությունը վճարում է ծրագրի հայաստանյան մասի ծախսերը: Մասնակիցները հոգում են իրենց ճանապարհածախսը:



## Սփյուռքը և տեխնոլոգիական ծրագրերը




## «Ներուժ». տեխնոլոգիական ստարտափների ծրագիր

Մեր գրասենյակի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համագործակցությամբ իրականացվող «Ներուժ» տեխնոլոգիական ստարտափների ծրագիրը նպատակ ունի հայրենիք բերել սփյուռքի տեխնոլոգիական և բիզնես փաղանը: Միաժամանակ այն նպատակ ունի օգտագործել սփյուռքի կապերը ներկայացնելու համար Հայաստանը՝ որպես համաշխարհային շուկայում ազդեցիկ տեխնոլոգիաների տեղակայման և ընդլայնման դարպաս:

«Ներուժ»-ը փորձում է նպաստել սփյուռքից դեպի Հայաստան նորարար հնարավորությունների ներհոսքին:

«Ներուժ»-ը մրցակցության է հրավիրում սփյուռքահայությանն աշխարհի տարբեր ծայրերից:

Երկրորդ փուլ անցած ստարտափերները ժամանում են Հայաստան մեկշաբաթյա բութքեմփի, որի ավարտին ստարտափները ժյուրիին են ներկայացնում իրենց ծրագրերը, և հաղթողները հրավիրվում են հայրենադարձվելու՝ ստանալով 15.000-ից 30.000 ԱՄՆ դոլար մրցանակ Հայաստանում իրենց ստարտափը հիմնելու համար:







### ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ՝

**2019 թվականին 17 երկրից 47 ստարտափներ ներկայացնող 80 սփյուռքահայեր Հայաստանում մասնակցեցին բութքեմփին: Ընտրվեց 6 հաղթող, որոնք հայրենադարձվելու և Հայաստանում ստարտափ հիմնելու հրավեր ստացան:**

**Ծրագիրը 2020 թվականին չիրականացվեց կորոնավիրուսային սահմանափակումների հետևանքով:*

Սեղմեք այստեղ «Ներուժ» տեխնոստարտափների ծրագրի մասին տեսանյութը դիտելու համար:




## "GovTech Launchpad". տեխնոլոգիական լուծումներ հայրենադարձության համար և ավելին

**Իմփաքթ Հաբ Երևանի և GIZ-ի հետ համագործակցությամբ՝ մեր գրասենյակը մեկնարկեց «GovTech Launchpad» ծրագիրը, որը նպատակ ունի ներգրավել հայրենադարձությանը և Հայաստան-սփյուռք կամրջին առնչվող տեխնոլոգիական լուծումներ:**

**Դրանք կօգնեն հայրենադարձվել պատրաստվող սփյուռքահայերին և/կամ արդեն իսկ հայրենդարձվածներին:**



**10 ստարտափներ մասնակցեցին աշխատաժողովների, պանելային քննարկումների և մենթորության դասընթացների, որից հետո իրենց ծրագրերը ներկայացրին ժյուրիի անդամներին:**

**Հաղթած մասնակիցներն անցան երկշաբաթյա աքսելերացիոն ծրագիր, որի ընթացքում նրանք մասնակցեցին թրեյնինգների և անհատական մենթորության կուրսերի՝ բարելավելով և զարգացնելով իրենց տեխնոլոգիական լուծումները:**

**Հաղթող ճանաչվեց «ArmeniaConnect» հարթակը, որն իրար է կապելու Հայաստանում ապրող սփյուռքահայերին՝ աշխատանք, կամավորական ծրագրեր, կրթական, բիզնես հնարավորություններ գտնելու, ծանոթությունների շրջանակն ընդլայնելու համար:**





# ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐՈՒԺԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ



Թեև բազմաթիվ քննարկումներ են եղել սփյուռքի մասնագիտական, գիտական, ֆինանսական և մարդկային ներուժի մասին, սակայն այն դեռևս ամբողջապես և իսպառ բացահայտված և քարտեզագրված չէ, մասնավորապես՝ ի՞նչ ներուժ է առկա, որտե՞ղ է այն և ինչպե՞ս է հնարավոր այն ներգրավել Հայաստան-սփյուռք գործակցության շրջանակներում:

Այդ պատճառով մեր գրասենյակն իր բյուջեի մի մասը հատկացրեց սփյուռքի քարտեզագրմանը՝ նպատակ ունենալով լրացնել Հայաստան-սփյուռք գործակցության մեջ առկա այս բացը: Որպես ռազմավարական ուղղություն՝ ծրագիրը կլինի ընթացիկ և պարբերաբար թարմացվող, հավաքագրված բոլոր տվյալները կպահպանվեն անվտանգ, հատուկ մշակված հարթակում:

Քարտեզագրման ծրագիրը հնարավորություն կտա ներգրավել սփյուռքի ներուժը Հայաստանի զարգացման գործում, հանրային կյանքում, համատեղ ծրագրերի իրականացման և համահայկական մասնագիտական ցանցերի հզորացման մեջ:



Սփյուռքի հետ կապն ամրապնդելու, համայնքներում առկա մարտահրավերները հասկանալու և հայրենիքի զարգացման գործում սփյուռքի դերն ընդլայնելու համար մեր գրասենյակն առաջնային նշանակություն է տալիս աշխարհի տարբեր կողմերում գտնվող հայ համայնքների հետ հանդիպումների անցկացմանը: Տեղեկատվության փոխանակումը և երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասին սփյուռքին իրազեկելը կարևոր նշանակություն ունեն մեր ներազգային հարաբերությունների կառուցման և զարգացման համար: Այս նպատակով՝ մեր գրասենյակում մենք պարբերաբար հյուրընկալում ենք սփյուռքի տարբեր համայնքների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, դեսպանների, ինչպես նաև գործուղվում ենք համայնքներ հանդիպումների և սփյուռքի մշակութային բազմազանությանը ծանոթանալու համար:

## Հանդիպումներ սփյուռքահայերի և Հայաստանում գտնվող օտարերկրացի պաշտոնյաների հետ

Մենք պարբերաբար նախատեսում ենք աշխատանքային հանդիպումներ սփյուռքահայերի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ աշխատանքային լայն հարթակ մշակելու և համագործակցության նոր ուղիներ գտնելու համար: Ամենակարևորը. մեր նպատակն է ապահովել Հայաստանի և սփյուռքի տնտեսական, սոցիալական, մշակութային և մասնագիտական այլ խմբերի ներգրավումը, այցելուներին մեր գրասենյակի աշխատանքային մշակույթին ծանոթանալու հնարավորության ընձեռումը:













## Գործուղումներ սփյուռք

Տեղում հանդիպումներ անցկացնելուն զուգահեռ՝ Գլխավոր հանձնակատարն ու աշխատակազմը պարբերաբար մեկնում են միջազգային աշխատանքային ուղևորությունների՝ հանդիպելու սփյուռքի հայ համայնքների հետ և զարգացնելու սիմբիոտիկ կապեր Հայաստանի և սփյուռքի միջև: Դրանք հաճախ ներառում են այցելություններ սփյուռքի մշակութային վայրեր և եկեղեցիներ, հանդիպումներ համայնքների ղեկավարների և կազմակերպությունների հետ, հարցազրույցներ, ուղևորությունից հետո հետևողական աշխատանքների իրականացում՝ կայուն գործընկերություն հաստատելու համար:







## Հայոց ցեղասպանության ճանաչումը ԱՄՆ-ում

Հետպատերազմյան շրջանում՝ 2021 թվականի ապրիլի 24-ին, գրանցվեց հայ ազգի սփոփիչ հաղթանակից մեկը, երբ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը 106-ամյակի հիշատակի իր խոսքում:

Գլխավոր հանձնակատար Սինանյանը և գրասենյակը ողջունեցին և շնորհավորեցին ամերիկահայ համայնքի անխոնջ աշխատանքը՝ արդարության և ճշմարտության այս հաղթանակը հնարավոր դարձնելու գործում:













## Սփյուռքը կապի մեջ է



Քովիդ-19 համաճարակի արդյունքում Գլխավոր հանձնակատարը ստիպված էր չեղյալ հայտարարել հայկական սփյուռքի համայնքներ այցելությունները: Այնուամենայնիվ, սփյուռքի հետ կապի պահպանումը և աշխատանքը նրա օրակարգի առաջնահերթությունների շարքում էին: Այդ նպատակով գրասենյակը գործարկեց «Սփյուռքը կապի մեջ է» ծրագիրը, որն առցանց տեսակոնֆերանսների միջոցով աշխարհասփյուռ համայնքների ներկայացուցիչներին կապում էր մեր գրասենյակին՝ խնդիրները բացահայտելու և լուծելու, համագործակցությունը խորացնելու համար: Մինչ աշխարհը կանգնած էր կարանտինի առաջ, գրասենյակը շարունակում էր կամուրջներ կառուցել Ռուսաստանի, Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Ասիայի և Ավստրալիայի համայնքների հետ:



Հայաստանում քովիդ-19-ի փարածումից ի վեր մեր գրասենյակն առաջնագծում էր՝ Հայաստանի քաղաքացիներին և առողջապահական ոլորփին սփյուռքի ռեսուրսների համախմբման միջոցով աջակցություն և օգնություն փրամադրելու համար:



## Այդ օգնությունը ներառում էր՝

1) սփյուռքյան օղակների միջոցով առաջին անհրաժեշփության պարագաների և անձնական պաշփպանական սարքավորումների ձեռքբերում,
2) Հայաստանի և սփյուռքի բժիշկների և բուժքույրերի միջև առողջապահական գիփելիքների փոխանակման հարթակի սփեղծում,
3) Հայաստանում քովիդ-19 թիմերի բժշկական առաքելությունների կազմակերպում:



## Սփյուռքյան մեր օղակների միջոցով առաջին անհրաժեշփության պարագաների և անձնական պաշփպանական սարքավորումների ձեռքբերում

Քանի որ աշխարհը փակում էր իր սահմանները, իսկ համահամաճարակային պարագաներն ու սարքավորումները գնալով նվազում էին, մեր գրասենյակը, Հայաստանի Հանրապեփության առողջապահության նախարարությունը, Հայաստանի և ԱՄՆ-ի «Հայաստան» հիմնադրամները, «Ձևի Ձեյս» վիրաբուժության կենփրոնը և Հայ օգնության միությունը միավորեցին իրենց ուժերը, համախմբվեցին ու ԱՄՆ-ից Հայաստան առաքեցին մեկ փոննա անհրաժեշփ բժշկական պարագաներ, անձնական պաշփպանական սարքավորումներ:

«Եթե անձնական պաշփպանական սարքավորումների այդ խմբաքանակը սփյուռքից այդքան արագ չհասներ, Հայաստանի առողջապահական ոլորփի մասնագեփները շափ ավելի բարդ իրավիճակում կլինեին: Սփյուռքի մեր հայրենակիցների կողմից այդ առաջին բեռնափոխադրումը մեզ հնարավորություն փվեց շարունակել համաճարակի դեմ պայքարն առանց անձնական պաշփպանական սարքավորումների պակասի մասին մփահոգվելու»:

Առողջապահության նախարար Անահիփ Ավանեսյան



Մեր գրասենյակը, Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (UNWFP) հետ համատեղ և Չինաստանի կառավարության աջակցությամբ, ՀՀ պարեփապան կազմակերպմամբ արագորեն ապահովեց Չինաստանից Հայաստան քովիդ-19-ի բուժման և կանխարգելման մեծ քանակությամբ պարագաներով բեռնված ինքնաթիռ:





Այս բեռը հնարավոր դարձավ ներկրել մեր գրասենյակի կողմից նախաձեռնված դրամահավաքի արդյունքում: Ավելի քան կես միլիոն դոլար հանգանակվեց սփյուռքի մեր գործընկերների, այդ թվում՝ արգենտինահայ բարերար և գործարար Էդուարդո Էռնեկյանի ընկերությունների, «Իզմիրլյան», «Սուրբ Սարգիս» հիմնադրամների, «Գալուստ Կիւլպենկեան» հիմնարկության և Հայ բարեգործական ընդհանուր միության միջոցով: Նվիրատվություններ են կատարվել նաև ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, «Իմ քայլը» հիմնադրամի, չինացի բարերարների և այլ նվիրատուների կողմից:

Փոխադրումն ընդգրկում էր ավելի քան 87.000 բժշկական զգեստներ, 20.000 KN95 և 24.000 բժշկական դիմակներ, ավելի քան 100 ոչ կոնտակտային ջերմաչափեր, կորոնավիրուսի ախտորոշիչ հետազոտությունների կենսաքիմիական հումք և այլ բժշկական գործիքներ:

## ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ՝

### Բժշկական պարագաներ

- 1 տոննա Լոս Անջելեսից,
- 1 տոննա Չինաստանից, որի համար մեր գրասենյակը հավաքեց 550.000 ԱՄՆ դոլար,

### Սփյուռքի և միջազգային աջակցություն՝

- 40 մասնագիտական վեբինար և հեռաբուժության կուրսեր,
- Ավելի քան 2 պասնյակ ֆրանսացի և ֆրանսահայ բժիշկների ժամանում Հայաստան




Սեղմեք այստեղ՝ դիտելու մարդասիրական առաքելությունների մասին տեսանյութը:

# ՔՈՎԻԴ-19







**Առողջապահական գիտելիքների փոխանակման հարթակի ստեղծում Հայաստանի և սփյուռքի բժիշկների և բուժքույրերի միջև**

Քովիդի թեժ ամիսներին մեր գրասենյակը գլխավորեց մի շարք բժշկական վեբինարներ և հեռաբժշկության դասընթացներ՝ Առողջապահության նախարարության, Առողջապահության ազգային ինստիտուտի, Հայկական միջազգային բժշկական կոմիտեի և «Հայաստան» հիմնադրամի հետ սերտ համագործակցությամբ: Քովիդ-19-ի շրջանակներում մենք անցկացրինք ավելի քան 40 տարբեր թեմաներով վեբինարներ՝ ամբողջ աշխարհից ավելի քան 1000 հայ բժիշկների և բուժաշխատողների ակտիվ մասնակցությամբ:









## Բժշկական առաքելությունների կազմակերպում Հայաստանում



Քովիդ-19-ի դեմ պայքարում մեր գրասենյակն աջակցեց Հայաստանում առաջին միջազգային բժշկական առաքելության կազմակերպմանը: Արձագանքելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության խնդրանքին՝ ֆրանսիացի և ֆրանսահայ բժիշկները Հայաստան ժամանեցին բժշկական երկու առաքելություններով: Առաջին խմբի ժամանումը հնարավոր դարձավ USAID-ի աջակցությամբ: Տասը բժիշկներ և բուժքույրեր եկան Մարսել-Երևան չարտերային չվերթով և ջանք չխնայեցին՝ աշխատելու Սբ. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում, վնասվածքաբանության և օրթոպեդիայի հետազոտական կենտրոնում և «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի ինֆեկցիոն հիվանդությունների բաժանմունքում:





Ամիսներ անց ֆրանսահայ բժիշկների երկրորդ խումբը ժամանեց Հայաստան: Այս առաքելությունը կազմակերպվել էր ՀՀ առողջապահության նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության հետ համատեղ: Խումբը ղեկավարում էր առաջատար բժիշկ-գիտնական, Մարսել-Նորֆ բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի վարիչ պրոֆեսոր Լորան Փափազյանը, որն առաջին անգամ էր հայրենիքում:



## Սփյուռքի մասնագետներն առաջատար են պատվաստանյութերի տարածման հարցում



«իԳործ» ծրագրի մասնակից, ԱՄՆ-ից ժամանած հանրային առողջության սփյուռքահայ մասնագետ Արազ Չիլոյանը, ով աշխատում է Առողջապահության նախարարությունում, եղել է պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացի առաջատարը, ինչպես նաև ղեկավարել Հայաստանում պատվաստանյութերի տարածման ռազմավարությունը:






Լիբանանում փնփեսական անկումից և փեղի ունեցած պայթյունից հեփո մեր գրասենյակն ակփիվորեն աջակցում և համագործակցում էր լիբանանահայ մեր հայրենակիցների հեփ:

Վերջին երկու փարիների ընթացքում Լիբանանի հայ համայնքի հեփ մեր աշխափանքները կապված են եղել մարդասիրական օգնության, հայրենադարձվել ցանկացող անձանց և նրանց ինփեգրմանն աջակցության, աշխափանքի, բնակարանաշինության, առողջապահության, կրթության և այլ հարցերի հեփ:





## Պայթյուն Բեյրութում

2020 թ. օգոսփոսի 4-ին Բեյրութի պայթյունի արդյունքում զոհվեց ավելի քան 200 մարդ, հազարավորները վիրավորվեցին և անօթևան մնացին, միլիոնավորները ցնցումների ենթարկվեցին:

Գլխավոր հանձնակափար Սինանյանը, Հայասփանից ժամանած պափվիրակության հեփ միասին, պայթյունից 4 օր անց Բեյրութում էր: Պափվիրակությունը Հայասփանից Լիբանան իրականացվող մարդասիրական օգնության առաջին երեք թռիչքներից էր:



Գլխավոր հանձնակատարի Լիբանան կատարած աշխատանքային այցը ներառում էր իրավիճակի գնահատում և հայ համայնքին աջակցություն: Հանդիպումներ են տեղի ունեցել երկրում հայ համայնքի, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների և եկեղեցու առաջնորդների հետ, այդ թվում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի, Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ Վերապատվելի Մկրտիչ Կարագյոզյանի, Հայկազյան համալսարանի ռեկտոր Փոլ Հայդոստյանի, Լիբանանում ՀՀ դեսպան Վահագն Աթաբեկյանի, Հայ բարեգործական ընդհանուր միության, Կարագյոզյան կենտրոնի, եկեղեցական կառույցների և կազմակերպությունների շատ այլ ներկայացուցիչների հետ:

Առավել հրատապ գնահատվեցին դեղորայքի (հատկապես քրոնիկ հիվանդների համար), սննդի և ջրի կարիքները, հայկական բնակեցված թաղամասերում (բնակելի տներ, խանութներ, դպրոցներ, եկեղեցիներ և համայնքային կենտրոններ) վերականգնման աշխատանքների համար ֆինանսական օժանդակությունը և հայրենադարձության գործընթացին աջակցությունը նրանց համար, ովքեր ցանկանում էին տեղափոխվել Հայաստան: Ներկայացուցիչները, որպես երկրորդական կարիք, կարևորեցին նաև հոգեբանական աջակցության անհրաժեշտությունը:








Հայաստանի Հանրապետությունը հաջողությամբ կազմակերպեց պարենային և դեղորայքային պարունակությամբ մարդասիրական բեռի առաքում Լիբանան:

Պայթյունին հաջորդած ամիսներին Հայաստանը ընդունեց [լիբանանահայ հազարավոր հայրենադարձների]: Մեր գրասենյակի աշխատակիցները դիմավորում էին օդանավակայանում Լիբանանից ժամանող յուրաքանչյուր թռիչք, տեղում տրամադրում օժանդակություն և տեղեկատվություն:

Սեղմեք [այստեղ]՝ դիտելու Լիբանան կատարած մեր մարդասիրական առաքելության մասին տեսանյութը:

### Զբաղվածության աջակցության ծրագիր. կարիերայի աջակցության առաջարկ լիբանանահայ հայրենադարձներին




«Repat Armenia»-ի հետ միասին մեր գրասենյակը ստեղծել է լիբանանահայերի զբաղվածության աջակցության ծրագիրը նրանց համար, ովքեր հայրենադարձվել են կամ ցանկանում են Լիբանանից տեղափոխվել և աշխատել Հայաստանում: Զբաղվածության աջակցության ծրագիրն ապահովում է կապը մեր հայրենակիցների և աշխատաշուկայի միջև, աջակցում Հայաստանում կարիերա և աշխատանքային հնարավորություններ գտնելու հարցում: Այն կարևոր դեր է խաղում աշխատանքի համապատասխանության, աշխատունակության բարձրացման, հմտությունների անհամապատասխանությունների վերացման համար և անմիջական կապի միջոցով աջակցում գործատուների և աշխատողների միջև մենթորության և աշխատանքային հարթակի ապահովմանը:



### «Imagine Armenia. Լիբանան»

Մեր գրասենյակը մասնակցեց «Repat Armenia» հիմնադրամի կողմից անցկացվող «Imagine Armenia. Լիբանան» երկօրյա առցանց ֆորումին: Առաջին անգամ այն նախատեսված էր հատուկ Լիբանանի համար, որտեղ հավաքվել էին աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայրենադարձներ և Հայաստանի պետական հաստատությունների ներկայացուցիչներ՝ քննարկելու հայրենադարձությունն ու ինտեգրումը: Հանձնակատար Սինանյանը հանդես եկավ բացման խոսքով և ներկայացրեց հայրենադարձության և Հայաստան-սփյուռք հարաբերությունների ներկա մոտեցումները:






# ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ



2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան Ադրբեջանը սկսեց լայնամասշտաբ ռազմական հարձակում Արցախի Հանրապետության դեմ: 1994 թ. հրադադարի համաձայնագրի այս խախտումը սատարում և համակարգում էր Թուրքիայի Հանրապետությունը, որն անմիջական ռազմական աջակցություն էր ցուցաբերում՝ ապահովելով նաև Սիրիայից ջիհադիստ վարձկանների հավաքագրումն ու տեղափոխումը:

Միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտմամբ՝ Ադրբեջանը մեծ տրամաչափի հրետանի, հրթիռներ, անօդաչու թռչող սարքեր և միջազգայնորեն արգելված կասետային զինամթերք օգտագործեց Արցախի դեմ՝ թիրախավորելով բազմաթիվ քաղաքներ, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, Շուշին, Հադրութը, Մարտունին և Մարտակերտը: Ավելի քան 100.000 մարդ ստիպված էր լքել և տեղահանվել իր տնից, իսկ նրանք, ովքեր մնացել էին Արցախում, պատսպարվել էին ստորգետնյա ապաստարաններում:

Քաղաքացիական ընդարձակ ենթակառուցվածքները, ներառյալ՝ դպրոցները, մանկապարտեզները, հիվանդանոցները, բնակելի շենքերը, եկեղեցիները և այլ կարևոր ենթակառուցվածքներ, դիտավորյալ և անխտիր հարձակման ենթարկվեցին: Ադրբեջանը նաև օգտագործեց արգելված քիմիական զենք (սպիտակ ֆոսֆոր) քաղաքացիական համայնքների մերձակայքում անտառները հրկիզելու համար՝ պատճառելով մարդկանց սարսափելի վնասվածքներ, նաև զանգվածային էկոլոգիական վնասներ:

Ավելին, Արցախի խաղաղ բնակչությանն էթնիկ զտման ենթարկելու և ահաբեկելու իր առաքելությանը համահունչ՝ ադրբեջանական ուժերը դաժանորեն սպանել են գերեվարված խաղաղ բնակիչների և ռազմագերիների, պարբերաբար հրապարակել այդ սարսափելի տեսանյութերը:

2020 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրեցին համատեղ հայտարարություն՝ հաստատելով ռազմական գործողությունների դադարեցումը և Լեռնային Ղարաբաղի տարածքում ռուսական խաղաղապահ զորքերի տեղակայումը Ղարաբաղի և Լաչինի միջանցքի շփման գծում:

Այս զեկույցի հրապարակման պահի դրությամբ հաստատվել է 3.621 հայ զինծառայողի և քաղաքացիական անձի մահվան փաստ, վիրավորվել է ավելի քան 11.000 զինծառայող և քաղաքացիական անձ, 300-ից ավելի զինծառայող դեռ անհայտ կորած է, և կա ավելի քան 200 հայ ռազմագերի, որոնք ապօրինի կերպով պահվում են Ադրբեջանի կողմից:











**Հակամարտության առաջին օրվանից սփյուռքն անսասան կանգնած էր հայրենիքի կողքին:**



**Պատերազմի շրջանում մեր գրասենյակի գործունեության հիմնական ուղղությունները ներառում էին՝**

- ամբողջ աշխարհի սփյուռքի համայնքների կողմից օդով և ցամաքով Հայաստան բերված հումանիտար օգնության և սարքավորումների լոգիստիկ հարցերի համակարգումը և այդ օգնության փոխանցումը ՀՀ առողջապահության, պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարություններին,

- ռազմական, բժշկական և հումանիտար օգնություն ցուցաբերելու համար Հայաստան և Արցախ ժամանած սփյուռքի բոլոր կամավորների հետ աշխատանքի համակարգումը,

- «Հայաստան» հիմնադրամի հետ միասին միջոցների հայթայթումը, որի արդյունքում լուծվեցին մարդասիրական անհամար կարիքներ,

- սփյուռքի խմբերի կազմակերպումը միջազգային մեդիայի լուսաբանմանը աջակցելու և տեղեկատվական պատերազմը հանդարտեցնելու համար, որը կարևոր նշանակություն ունեցավ աշխարհին տեղեկացված պահելու, ադրբեջանական և թուրքական ապատեղեկատվություններին հակազդելու համար,

- սփյուռքի համայնքների քաղաքական, լոբբիստական և տեղեկատվական արշավների դյուրացումը, ներառյալ՝ քաղաքացիական անհնազանդության ակցիաները, բողոքները, թվիթթոնները և սոցիալական ցանցերում արշավները:






## Հետպատերազմյան ժամանակաշրջան

Հետպատերազմյան շրջանում մեր գրասենյակն աշխատում էր լուծել ինչպես մարդասիրական, այնպես էլ վերակառուցման կարիքները Արցախում՝ ակտիվ ներգրավելով սփյուռքահայ մեր հայրենակիցներին, նաև բարերարներին և ներդրողներին՝ ուղղորդելով և համակարգելով նրանց ջանքերը: Գլխավոր հանձնակատար Սինանյանը մեկնեց Արցախ և հանդիպեց նախագահի և կառավարության այլ պաշտոնատար անձանց հետ՝ քննարկելու կարևոր հարցեր և պարզելու, թե ինչպես կարող է այժմ սփյուռքը դեր ունենալ Արցախին աջակցման գործում:









Աշխատանքային այցից հետո մենք համակարգեցինք Արցախի կառավարության և սփյուռքի շուրջ 30 ոչ առևտրային կազմակերպությունների հանդիպումը, որի արդյունքում ստեղծվեց համակարգող խորհուրդ՝շարունակելու թե՛ մարդասիրական, թե՛ վերակառուցման ջանքերը տեղում:







## Հետպատերազմյան շրջանում մեր գրասենյակի աշխատանքի հիմնական ուղղություններն էին՝

- սփյուռքի բարեգործության և ներդրումային ծրագրերի համակարգումը Արցախում,

- թերապևտների վերապատրաստման այնպիսի հարթակի ստեղծումը, որի շնորհիվ սփյուռքի մասնագետները կվերապատրաստեն տեղացի մասնագետներին՝ մատուցելու հոգեբանական ծառայություն հետպատերազմյան և պատերազմի հետ կապված այլ վնասվածքներից տառապող զինվորներին և նրանց ընտանիքներին,

- սփյուռքի ֆիզիոթերապևտների Հայաստան ժամանման հետ կապված հարցերի համակարգումը, որի օգնությամբ սփյուռքահայ մասնագետները սկսեցին աշխատել վիրավոր զինվորների հետ և նրանց վերականգնման ուղղությամբ,

- սփյուռքի պրոթեզավորող մասնագետների ներգրավումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը խորհրդատվություն տրամադրելու և վիրավոր զինվորների համար պրոթեզի պատշաճ օգտագործման գործընթացների և նորագույն տեխնոլոգիաների վերաբերյալ վերապատրաստելու համար,

- սփյուռքի բարեգործական հարցերի համակարգողի աշխատանքի ընդունում ամբողջական դրույքով՝ Արցախի վերակառուցման և վերաշինության համար սփյուռքի կազմակերպությունների և անհատ բարերարների հետ աշխատելու նպատակով,

- «իԳործ» ծրագրի ընդլայնում՝ սփյուռքի մասնագետներին Արցախի կառավարության կազմում աշխատելու հնարավորություն ընձեռելու համար:





## ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ՝

-սփյուռքի հոգեկան առողջության 7 մասնագետներ հյուրընկալվել էին 7 վեբինարի շրջանակներում մոտ 240 գրանցված տեղացի հոգեբանների վերապատրաստելու համար, որոնք կենտրոնացած էին սթրեսային սուր խանգարումների, հետվնասվածքային սթրեսային խանգարումների և պատերազմի արդյունքում այլ վնասվածքների բուժման հարցերի վրա,

- սփյուռքի 14 ֆիզիոթերապևտներ ժամանեցին Հայաստան և մեր զինվորների հետ աշխատեցին տարբեր հիվանդանոցներում,

-սփյուռքի պրոթեզավորման 4 մասնագետ վերապատրաստեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության կողմից ստեղծված միջմասնագիտական թիմին, որը կենտրոնացած է հաշմանդամություն ունեցող անձնանց հետ աշխատանքի վրա:

Այն բոլոր դժվարությունները, որոնց մենք առերեսվել ենք անկախությունից ի վեր, քովիդ-19 համավարակը և հատկապես Արցախյան երկրորդ պատերազմը, կազմաքանդիչ ազդեցություն են ունեցել ոչ միայն պետական ինստիտուտների, այլև մեր հավաքական ինքնության վրա: Շարունակելով հաղթահարել այս ամենը՝ մենք լիահույս և հաստատակամ ենք առաջ շարժվելու գործում:

Մտորելով այն տրավմայի մասին, որ ապրեցինք որպես ազգ, և հաղթահարելով դա՝ մենք մնում ենք վճռական մեր համոզմունքներում, որ միայն համահայկական միասնական ջանքերով կարող ենք վերականգնվել, կազդուրվել և ծաղկել նորից:

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը շարունակելու է աշխատել հայկական սփյուռքի առեւլի ներուժի համախմբման, պետականաշինության գործում սփյուռքահայերի ներգրավման և միաժամանակ հայկական համայնքների զարգացման, հայ ինքնության պահպանման ուղղությամբ:

Մենք միշտ բաց ենք աշխատել բոլոր կազմակերպությունների և անհատների հետ, որոնք շարունակում են կառուցել Հայաստանի ապագան, շարունակում են հզորացնել աշխարհասփյուռ հայկական համայնքները... որովհետև ամենից առաջ և ամենակարևորը շարունակելու խիզախություն ունենալն է:

Ծառայելով հայրենիքին և սփյուռքին՝

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի
գրասենյակի աշխատակազմ

diaspora.gov.am

@DiasporaGovAm

+374 10 58 91 55

diaspora@gov.am